ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ԳՎԾ-18/1.1>>

ք. Երևան «04» 11 2018թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս դեպարտամենտի ղեկավար Ա. Նիկոյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գազկոմշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Միսակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության շենքի վերանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **15.12.2018թ:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **10500000 (տաս միլիոն հինգ հարյուր հազար)** ՀՀ դրամ, որից **1750000 (մեկ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քննչական կոմիտե	«Գազկոմշին» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5	Ք. Երևան, Նոր Նորքի 9-րդ զ-ծ, 20/53,
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011019776	Հ/Հ 11500905218000
ՀՎՀՀ 02631263	ՀՎՀՀ 00843968
	էլ. հասցեն՝ gascomshin@gmail.com
	հեռ. (095)000027
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
«07» նոյեմբերի 2018թ. կնքված
<<ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ԳՎՇ-18/1.1>> ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Ֆ/Ֆ	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափի միավոր	Քանակը	Գինը	Գումարը
1	2	3	4	5	6
	Ներքին հարդարում				
	Քանդման աշխատանքներ				
1	Լամինատե հատակի քանդում	100մ^2	0,80	24,393	19,515
2	Ց/ա հարթեցուցիչ շերտի քանդում	100մ^2	0,01	47,740	0,477
3	Միջնորմների քանդում	մ3	1,25	10,286	12,858
4	Պատերի կերամիկական սալերի քանդում	մ2	12,58	0,783	9,849
5	Ց/ավազե սվաղի քանդում պատերից և առաստաղից	100 մ^2	0,126	24,146	3,042
6	Գաջի սվաղի քանդում պատերից	100 մ^2	0,488	101,779	49,668
7	Պատերի մաքրում հին ներկից	100մ^2	8,48	13,467	114,202
8	Խեցեսալե հատակների քանդում	100 մ^2	0,01	56,586	0,566
9	Շին.աղբի բարձում ինքնաթ. ձեռքով	տն	4,11	0,470	1,931
10	Տեղափոխում 5կմ	տն	4,11	2,377	9,770
	Գիպսակարտոնե միջնորմներ				
1	Միջնորմների երեսապատում 9,5մմ գիպսաստվարաթղթե սալերով, ցինկապատ պրոֆիլներից կարկասի վրա	100մ2	2,3368	309,287	722,742
2	Կարկասի պատրաստման համար պրոֆիլի արժեքը 40մմ	գմ	595,87	0,333	198,634
3	Պատերի ձայնամեկուսիչ շերտի իրականացում 40մմ պենոպլաստե սալերից	մ3	9,35	16,164	151,087
	Պատեր, միջնորմներ				
1	Միջնորմի իրականացում 10 սմ պեմզաբլոկով	մ3	12,67	34,954	442,865
2	Միջնորմների և պատերի ամրանավորում	տն	0,274	77,597	21,262
3	Ամրան Փ6 Ա-I	տն	0,105	539,345	56,480
4	Պողպատե թերթ 4*50*360	տն	0,1640	675,249	110,741
5	Դյուբել Փ5, L-70մմ	հատ	546,0	0,123	67,204
	Հատակներ				
1	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ.	մ^2	1,32	1,626	2,146
2	Հատակի միաշերտ հիդրոմեկուսացում տոլով բիտումի մածիկի վրա	100 մ^2	0,01	280,540	2,805
3	Խեցեսալե հատակի կառուցում 300*300մ	մ^2	1,32	9,019	11,905
4	Հատակների կառուցում պրեսգրանիտից 40*40, չսահող	մ^2	13,8	13,272	183,160
5	Պրեսգրանիտե շրիշակների կառուցում H=10սմ	100գմ	0,255	166,638	42,493
6	Լամինատե հատակի կառուցում 8մմ AC4 կարգի	100մ^2	1,307	956,001	1249,493
	Հարդարման աշխատանքներ				
1	Պատերի լավ որակի սվաղում գաջի շաղախով	100 մ^2	0,49	278,354	136,393
	Պատերի սվաղում ց/ավազային շաղախով ցանցով	100մ^2	0,126	231,256	29,138
	Պատերի երեսապատում հախճասալերով 200*250մմ H=2,8մ	100մ^2	0,126	960,732	121,052
2	Պատերի գաջի սվաղի նորոգում մինչև 10մ2	մ^2	71,45	3,116	222,659
3	Նույնը առաստաղների	մ^2	13,829	3,600	49,785
4	Պատերի բարելավված ներկում կիսափայլուն լատեքսով	100 մ^2	10,30	184,210	1897,360
5	Առաստաղների բարելավված ներկում կիսափայլուն լատեքսով	100 մ^2	2,77	200,727	556,014
	Այլ աշխատանքներ				

1	Արտաքին աստիճանավանդակի պատերի երեսապատում 30մմ հաստության բազալտե սալերով	մ²	9,08	36,946	335,469
2	Մուտքի հարթակի և աստիճանների երեսապատում 30մմ բազալտե սալերով	մ2	1,50	20,243	30,365
	Մետաղական հարթակ աստիճանավանդակում				
1	Մետաղական դետալներով հարթակի կարկասի կառուցում աստիճանավանդակում	տն	0,104	107,690	11,159
2	Անկյունակ 100*100*8մմ	գմ	4,8	8,424	40,433
3	Պողպատյա քառակուսի խողովակ 100*100*4	մ	3,70	7,219	26,710
4	Ծածկի միաձույլ ե/բ հատվածների կառուցում Բ-20 դասի ծանր բետոնից	մ³	0,144	62,581	9,012
5	Ամրան Ա - Ա500с Φ16	տն	0,03584	504,740	18,090
6	Մետաղական կարկասի յուղաներկում	100 մ²	0,0340	181,036	6,155
	Դռներ, պատուհաններ				
	Քանդման աշխատանքներ				
1	Գոյություն ունեցող մետաղապլաստե դռների քանդում	100 մ²	0,0817	155,104	12,674
2	Գոյություն ունեցող պատուհանագոգերի քանդում	100 մ²	0,084	264,711	22,328
3	Դռների և պատուհանների թեքությունների գաջի սվաղի քանդում	100 մ²	0,07	101,779	6,686
4	Շին.աղբի բարձում ինքնաթ. ձեռքով	տն	0,35	0,470	0,167
5	Տեղափոխում 5կմ	տն	0,35	2,377	0,843
	Բացվածքներ				
1	Մետաղապլաստե բլոկով, կաղնեգույն, 60մմ , 4+4մմ ապակափաթեթով դռների տեղադրում / հայկական պրոֆիլ /	մ²	9,45	38,430	363,165
2	Մետաղապլաստե բլոկով, կաղնեգույն, 60մմ , 4+4մմ ապակափաթեթով դռան և վիտրաժի տեղադրում / հայկական պրոֆիլ /	մ²	13,02	38,430	500,361
3	Մետաղապլաստե բլոկով, սպիտակ, 60մմ , 4+4մմ ապակափաթեթով դռների տեղադրում / հայկական պրոֆիլ /	մ²	9,45	30,588	289,053
4	Ապամոնտաժված մետաղապլաստե 0,9*2,1 չափի սպիտակ դռների տեղադրում 2 հատ	մ²	3,78	34,136	129,035
5	Ապամոնտաժված մետաղապլաստե 0,9*2,1 չափի սպիտակ դռան վերանորոգում և տեղադրում 1հատ	մ²	1,89	34,136	64,518
6	Քարե պատերում, մինչև 2մ բարձրությամբ բացվացքներում տրավերտինե 30մմ սալերից պատուհանագոգի տեղադրում	100մ² բացվ.	0,395	111,537	44,057
7	Տրավերտինե, եզրահանված և հղկափայլեցված 30մմ հաստության պատուհանագոգի արժեք	մ2	8,44	27,694	233,597
	Հարդարման աշխատանքներ				
1	Պատուհանների և դռների թեքությունների սվաղ գաջի շաղախով	100 մ²	0,07	656,879	43,150
2	Թեքությունների և պատերի ներկում լատեքսային ներկով	100 մ²	0,07	184,210	12,101
3	Սվաղի անկյունակ	գմ	57,16	0,108	6,156
	Մետաղական դուռ				
1	Մետաղական ճաղավանդակով դռան տեղադրում քառ, խողովակից	տն	0,116	286,102	33,169
2	Պողպատյա ուղղանկյուն խողովակ 80*40*2	մ	8,80	2,145	18,874
3	Պողպատյա ուղղանկյուն խողովակ 50*30*2	մ	10,40	1,462	15,201
4	Պողպատյա քառակուսի ձող 10*10մմ	մ	14,20	0,543	7,712
5	Պողպատե անկյունակ 20*20*2	մ	10,40	0,455	4,736
6	Պողպատե թիթեղ 2մմ	մ2	2,40	10,097	24,234
7	Պողպատ շերտավոր 30*3	գմ	4,00	0,460	1,840
8	Ծխնի	զույգ	4,0	1,539	6,154
9	4+4մմ ապակեփաթեթ	մ2	0,3	15,385	4,800
10	Դռան երեսապատում երկկողմանի լամինացված սալով	մ2	1,86	4,459	8,293
11	Դռան ջերմամեկուսիչ շերտ 20մմ պենոպլաստե սալով	մ2	1,86	0,769	1,431
12	Մետաղական բռնակ	հատ	1,0	4,616	4,616
13	Սարքավորումներ / Шпингалет/	հատ	2,0	0,646	1,292
14	Ներկառուցվող փական	հատ	1,0	12,308	12,308

15	Մետաղական դռան յուղաներկում	100 մ²	0,0750	140,925	10,569
	Ջեռուցում				
1	Ալյումինե նոր մարտկոցների տեղադրում H = 500 0,129Կվտ, 100 հատ	ԷԿՄ	30,00	20,246	607,447
2	Ալյումինե շերտով պոլիպրոպիլենե, տաք ջրի համար խողովակների մոնտաժում , PN=10 d=20մմ / փորձարկումով /	գմ	25,00	3,792	94,792
3	Մարտկոցի վերևի փական Φ15	հատ	10,00	5,542	55,421
4	Մարտկոցի ներքևի փական Φ15	հատ	10,00	5,500	54,999
5	Մարտկոցի մոնտաժային կոմպլեկտ	հատ	10,00	1,809	18,091
6	Առկա ջեռուցիչ սարքերի ապամոնտաժում	հատ	10,00	1,296	12,961
	Էլեկտրատեխնիկական մաս				
	Էլեկտրական լուսավորություն				
1	Լուսավորության մուտքային վահանակի տեղադրում, 40Ա-380Վ եռաֆազ, խմբային 220Վ 2x16Ա, 8x25Ա միաբևեռ ավտոմատ անջատիչներով	լրակազմ	1,0	14,163	14,163
2	Սարքավորումների մոնտաժման վահանակ 36 մոդուլի համար IP 65	հատ	1,0	45,357	45,357
3	40Ա եռաֆազ ավտոմատ անջատիչ TX3 60004P, C63A	հատ	1,0	17,599	17,599
4	16Ա միաֆազ ավտոմատ անջատիչ, TX3 6000 1P B16A	հատ	2,0	2,142	4,283
5	25Ա միաֆազ ավտոմատ անջատիչ , TX3 6000 1P B25A	հատ	8,0	2,142	17,133
6	Լուսատու առաստաղային LED լամպով 220Վ, 18Վտ , 1200մմ	հատ	19,0	15,767	299,565
7	Լուսատու արտաքին պատի, IP 64 LED լամպով 220Վ, 20Վտ	հատ	1,0	14,997	14,997
8	Ջահ էլեկտրաշիկացման թելիկով լամպով 3x100Վտ	հատ	3,0	22,655	67,966
9	Ջահ էլեկտրաշիկացման թելիկով լամպով 5x100Վտ	հատ	8,0	38,041	304,324
10	Հաղորդալար, պղնձե ջիղով, մեկուսացված, բաժանիչ հիմքով , հատվածքը 3x4 մմ2 ՊՊՎԳ	100մ	2,0	111,735	223,471
11	Հաղորդալար, պղնձե ջիղով, մեկուսացված, բաժանիչ հիմքով հատվածքը 3x2,5 մմ2 ՊՊՎԳ	100մ	4,2	77,996	327,582
12	Անջատիչ նորմալ տարբերակի, միաստեղ, թաքնված տեղադրման համար 220Վ,6Ա	հատ	22,0	1,589	34,960
13	Անջատիչ նորմալ տարբերակի, երկտակած, թաքնված տեղադրման համար 220Վ,6Ա	հատ	1,0	2,318	2,318
14	Երկբևեռ խրոցակային վարդակ երրերդ հողանցման հպակով 220Վ6Ա,	հատ	48,0	1,865	89,542
15	Տուփ անջատիչների, խրոցակային վարդակների տեղադրման համար	100հտ	0,71	10,308	7,319
16	Ճյուղավորիչ տուփ ներսի փակ տեղադրման համար	100հտ	0,40	10,308	4,123
17	Ճարմանդ ներսի հաղորդալարերի ամրակապման համար	100հտ	14,0	1,539	21,539
18	Ակոսների փորում 20*40	100մ	1,0	41,672	41,672
19	Ակոսագծերի գաջի սվաղում	100մ²	0,04	278,352	11,134
	Արտաքին լուսավորության ցանց				
1	Հերմետիկ պակետային անջատիչ, 220Վ, 25Ա Legrand	լ-մ	1,0	13,094	13,094
2	Հաղորդալար, պղնձե ջիղով, մեկուսացված, բաժանիչ հիմքով հատվածքը 3x2,5 մմ2 ՎՎԳ	100մ	0,4	77,996	31,198
3	Պոլիէթիլենային էլեկտրատեխնիկական գոֆրե խողովակների տեղադրում Φ20մմ Պ20	100մ	0,4	45,518	18,207
4	Լուսարձակ IP65 տարբերակի, ներկառուցված թողարկող կարքաբերող սարքով ГО 04-150-005	հատ	4,0	49,794	199,177
5	Մետալոհալոգեն լամպ 220Վ, 150Վտ	հատ	4,0	6,154	24,616
6	Մետաղական բարձակ լուսարձակների տեղադրման համար	հատ	4,0	3,077	12,308
7	Հեղյուս պնդօղակով M16	հատ	4,0	1,420	5,680
8	Անցքերի շաղափում քարե պատի մեջ մինչև 60սմ	100 հատ	0,04	77,542	3,102
9	Ճարմանդ ամրակապման համար	100հտ	0,8	1,539	1,231
	Ապամոնտաժման աշխատանքներ				

1	Ավտոմատ անջատիչներով լուսավորության վահանակի ապամոնտաժում	հտ	1,0	2,196	2,196
2	Գոյություն ունեցող լուսատուների ապամոնտաժում	հատ	10,0	1,073	10,731
3	Վարդակների և անջատիչների ապամոնտաժում	հատ	10,0	0,130	1,305
	Հրդեհային ազդանշանում և պահպանության համակարգ				
1	8 մուտքանի հսկիչ պանել LCD էկրանով, ընդարձակման հնարավորությունով	հատ	1,00	137,791	137,791
2	Մալուխ հատվածքը CV4U	մ	200,00	1,489	297,734
3	Հրդեհային ձեռքի ազդասարք	հատ	2,00	12,971	25,942
4	Ծխային տվիչ SEC-M532	հատ	34,00	8,543	290,455
5	Լուսաձայնային շչակ	հատ	2,00	25,453	50,907
6	Ամրակապման ճարմանդ	100հտ	4,00	1,539	6,154
7	Մալուխի սակառ 16x16մմ	100մ	1,80	37,757	67,962
8	Անցքերի շաղափում միջնորմների մեջ մինչև 25սմ	100 հատ	0,08	33,971	2,718
9	Անցքերի շաղափում քարե պատի մեջ մինչև 60սմ	100 հատ	0,02	77,542	1,551
10	Անցքերի բացում միջհարկային ծածկերում	100 տեղ	0,01	165,438	1,654
11	Ակոսների փորում 20*40	100մ	1,00	41,672	41,672
12	Ակոսագծերի գաջի սվաղում	100մ^2	0,04	278,352	11,134
	Ջրագծի ներքին տեղամաս				
1	Լվացարանների ապամոնտաժում	100հատ	0,03	1526,009	45,780
2	Զուգարանակոնքերի ապամոնտաժում	100հատ	0,03	1175,954	35,279
	Կոյուղագծի ներքին տեղամաս				
1	Խեցե լվացարանի տեղադրում, սիֆոնով, թողարկով և ճկուն խողովակով	կ-տ	3,00	25,123	75,368
2	Զուգարանակոնքի տեղադրում ճկուն խողովակով	կ-տ	3,00	38,242	114,727
	Ընդամենը				**12780,241**
	ԱԱՀ 20%				**2556,048**
	Ընդամենը				**15336,290**
	Այդ թվում հետադարձ գումար մետաղապլաստե դռների արժեքից ներառյալ տեղափոխումը և ԱԱՀ-ը , ժամանակավոր շենքերի և կառույցների արժեքից ներառյալ ԱԱՀ20%				**179,420**
	Ընդամենը առանց հետադարձ գումարի				**15156,870**

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Բունիաթյան փողոց 1-ին անցում N2 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
Հ/Հ 900011019776
ՀԿՀՀ 02631263

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Գազկոմշին» ՍՊԸ
Ք. Երևան, Նոր Նորքի 9-րդ զ-ծ, 20/53,
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500905218000
ՀԿՀՀ 00843968
էլ. հասցեն՝ gascomshin@gmail.com
հեռ. (095)000027

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
«07» նոյեմբերի 2018թ. կնքված
<<ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ԳՎՇ-18/1.1>> ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Քանդման աշխատանքներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	15.12.2018թ
2	Գիպսակարտոնե միջնորմներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	15.12.2018թ
3	Պատեր, միջնորմներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	15.12.2018թ
4	Հատակներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	15.12.2018թ
5	Հարդարման աշխատանքներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	15.12.2018թ
6	Այլ աշխատանքներ, Մետաղական հարթակ աստիճանավանդակ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	15.12.2018թ
7	Դռներ, պատուհաններ, Քանդման աշխատանքներ, Բացվածքներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	15.12.2018թ
8	Հարդարման աշխատանքներ, Մետաղական դուռ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	15.12.2018թ
9	Ջեռուցում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	15.12.2018թ
10	Էլեկտրատեխնիկական մաս: Էլեկտրական լուսավորություն	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	15.12.2018թ
11	Արտաքին լուսավորության ցանց	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	15.12.2018թ
12	Ապամոնտաժման աշխատանքներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	15.12.2018թ
13	Հրդեհային ազդանշանում և պահպանության համակարգ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	15.12.2018թ
14	Ջրագծի ներքին տեղամաս	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	15.12.2018թ
15	Կոյուղագծի ներքին տեղամաս	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	15.12.2018թ
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	15.12.2018թ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
Հ/Հ 900011019776
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Գազկոմշին» ՍՊԸ
Ք. Երևան, Նոր Նորքի 9-րդ զ-ծ, 20/53,
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500905218000
ՀՎՀՀ 00843968
էլ. հասցեն՝ gascomshin@gmail.com
հեռ. (095)000027

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
«07» նոյեմբերի 2018թ. կնքված
<<ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ԳՎՇ-18/1.1>> ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45611300/8	այլ շենքերի, շինությունների հիմնանորոգում											10500000	10500000	**10500000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
Հ/Հ 900011019776
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Գազկոմշին» ՍՊԸ
Ք. Երևան, Նոր Նորքի 9-րդ զ-ծ, 20/53,
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500905218000
ՀՎՀՀ 00843968
էլ. հասցեն՝ gascomshin@gmail.com
հեռ. (095)000027

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 07 » նոյեմբերի 2018թ. կնքված
<<ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ԳՎՇ-18/1.1>> ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 4.1
«07» նոյեմբերի 2018թ. կնքված
<<ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ԳՎՇ-18/1.1>> ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն